ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«09» մայիսի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ՝ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԻ ԵՎ ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի հայրենակիցներ, սիրելի ստեփանավանցիներ

Մայիսի 9-ը Հայրենական Մեծ պատերազմում տարած փառահեղ հաղթանակի օրն է՝ մի տոն, որն ընդգծում է մեր պապերի և հայրերի քաջությունն ու անսահման նվիրումը:

Այդ հաղթանակի պատմությունը նաև մեր համայնքի զավակների պատմությունն է, ովքեր անմնացորդ կերպով պայքարեցին հանուն խաղաղության:

Այսօր՝ նոր փորձությունների և մարտահրավերների պայմաններում, մեր պարտքն է պահպանել այդ ոգին՝ ամուր կամքով, միասնությամբ ու հայրենիքի հանդեպ ունեցած անմնացորդ սիրով:

Հաղթանակները շարունակական ջանք ու համառություն են պահանջում՝ ամեն օր, յուրաքանչյուր գործում:

Խոնարհվում եմ բոլոր հերոսների հիշատակի առաջ, ինչպես նաև խորին երախտագիտություն եմ հայտնում երկրապահներին՝ մեր հայրենիքի պաշտպաններին:

Թող խաղաղությունը, կայունությունն ու ազգային համերաշխությունը ամրապնդեն մեր պետության հիմքերը:

Շնորհավոր Հաղթանակի տոնը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ